Նոր Կտակարանի վարդապետության սերտում. Գնահատում 2

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Վարդապետության սերտման հղումներ

Հարցեր 1-3-ի համար գրեք համապատասխան հղման տառը՝ յուրաքանչյուր արտահայտության դիմաց հատկացված դատարկ տեղում: Խնդրում ենք չօգտվել ձեր սուրբ գրություններից գնահատման այս մասի համար:

1. _____ «Հաւատքը, եթէ գործ չ'ունենայ, ըստ ինքեան մեռած է»:
2. _____ «Ժամանակների լրութեան տնտեսութեան համար, որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը»:
3. _____«Բայց դարձեալ ոչ կինն առանց մարդի, եւ ոչ մարդն առանց կնկայ, Տէրումը»:

ա.Ա Կորնթացիս 11.11

բ. Եփեսացիս 1.10

գ. Բ Տիմոթեոս 3.15–17

դ. Հակոբոս 2.17–18

ե. Հայտնություն 20.12

Սուրբ գրությունների հիմնական արտահայտություններ

Հարցեր 4-6-ի համար լրացրեք բաց թողնված բառերը վարդապետության սերտման սուրբ գրությունների հիմնական արտահայտություններում: Խնդրում ենք չօգտվել ձեր սուրբ գրություններից գնահատման այս մասի համար:

4. «Ձեր _____ները _____ու _____ են»: (Ա Կորնթացիս 6.19–20):
5. Եկեղեցին «առաքեալների և մարգարէների _____ հիմքի վերայ է շինուած, _____որի անկիւնի գլուխը _____ Յիսուս Քրիստոսն է» (Եփեսացիս 2.19–20):
6. «Քրիստոսի Երկրորդ գալուստը ... չի _____, եթէ _____ չգայ _____» (Բ Թեսաղոնիկեցիս 2.1–3):

Գնահատման մնացած մասի համար կարող եք օգտագործել ձեր սուրբ գրությունները:

Հարցեր 7-9-ի համար բացահայտեք վարդապետության սերտման հատվածներից մեկը կամ մի քանիսը, որոնք կարող են որևէ մեկին օգնել հետևյալ իրավիճակներում:

7. Ձեր ընկերոջ սիրելին վերջերս է մահացել: Ձեր ընկերը շատ հարցեր ունի այն մասին, թե ինչ է կատարվում մեզ հետ մահից հետո:	
8. Ձեր եղբայրը կարծես պայքարում է և հարցականի տակ է դնում՝ արդյոք Աստված իրականում տեղյակ է իրենից:	
9. Եկեղեցու ղեկավարը խնդրում է ձեզ Կիրակնօրյա դպրոցի առաջիկա դասին խորհուրդ տալ ձեր դասընկերներին, թե նրանք ինչպես կարող են հավատարիմ մնալ, երբ բախվում են կեղծ գաղափարների և գայթակղությունների:	

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment* 2-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.

Հարցեր 10-11-ում ցուցադրեք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները՝ օգտագործելով ձեր գիտելիքներն ու կարողությունը:

10. Ինչպե՞ս կբացատրեիք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու հետևյալ երեք սկզբունքները մեկին, ով անծանոթ է դրանց:

    ա. Գործել հավատքով

    բ. Քննել հասկացությունները և հարցերը հավերժության հեռանկարով

    գ. Ձգտել մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:

11. Դուք ունեք ընկեր, որը շուտով ավարտելու է միջնակարգ դպրոցը և նյարդայնանում է այն կարևոր որոշումներից, որոնք նա պետք է կայացնի իր կյանքի առաջիկա մի քանի տարիների ընթացքում: Պատասխանեք հետևյալ հարցերին.

    ա. Ի՞նչ կխնդրեիք նրան անել՝ հավատքով գործելու համար:

    բ. Ինչպե՞ս կարող եք օգնել նրան՝ տեսնելու իր իրավիճակը հավերժության հեռանկարով:

    գ. Վարդապետության սերտման հատվածները աստվածայնորեն նշանակված աղբյուրների օրինակներ են: Վարդապետության սերտման ո՞ր հատվածով (հատվածներով) կկիսվեիք ձեր ընկերոջ հետ: Ինչո՞ւ:

12. Վարդապետութան սերտման 13 ուսումնասիրված հատվածներից որո՞նք են մեծապես ազդել ձեզ վրա և ինչո՞ւ: Այս հատվածն ի՞նչ է ուսուցանում ձեզ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment* 2-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.